

Լորենտա ԲԱՋԻԿՅԱՆ
 Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
 լեզվա հասարակագիտական համալսարան

**ՍԱՍԿԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
 ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍԱՑՅԻՆ-ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
 ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
 (ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)**

Սույն հետազոտության մեջ քննության են առնվում անգլերենի սաստկական դերանունները, որոնք դիտարկվում են անդրադարձ դերանունների շրջանակում: Կառուցվածքային և իմաստային-գործաբանական վերլուծությունների միջոցով վեր են հանվում այն ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք առկա են անգլերենի վերոնշյալ դերանունների և դրանց հայերեն համարժեքների միջև: Կառուցվածքային տեսակետից անգլերենի դերանունների անդրադարձ տեսակին հայերենում համարժեք է կամ -վ ածանցով բայը, կամ առանց -վ ածանցի բայը և անձնական դերանվան հոլովական ձևերը (**ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ**): Անգլերենի շեշտող դերանունները արտահայտվում են **ինքս, ինքդ, ինքն, ինքներս, ինքներդ, ինքներն կամ իրենք** անձնական դերանունների սաստկական ենթատեսակի միջոցով: Իմաստային-գործաբանական վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ ի տարբերություն հայերենի՝ անգլերենի շեշտող կառույցները ավելի բազմաբնույթ են և բազմիմաստ:

Բանալի բառեր. անդրադարձ դերանուններ, սաստկացուցիչներ, գործաբանական իմաստ, «անսպասելիության» գործոն, կառուցվածքային վերլուծություն, PR միավորներ, իմաստային վերլուծություն

Անգլերենի քերականագիտության մեջ *myself, yourself, himself, herself, itself, ourselves, yourselves, themselves* անդրադարձ դերանունները միշտ եղել են վիճաբանության առարկա /И. Иванова, С. Лукина, L. Brinton, M. Blokh, P. Hopper, R. Huddleston, B. Iyish, Th. Payne և այլ/: Տարբեր տեսակետների առկայության պատճառը այն է, որ տվյալ դերանունները ունեն երկակի բնույթ. դրանք կարող են հանդես գալ երկու գործառույթով՝

1) անդրադարձ բայաձևի ցուցիչներ, **անդրադարձ դերանուններ** (*reflexive pronouns կամ self-pronouns*),

2) սաստկական իմաստի ցուցիչներ, **սաստկացուցիչներ կամ շեշտող դերանուններ** (*intensifiers կամ emphatic pronouns*):

Որոշ լեզվաբաններ տարանջատում են այդ երկու գործառույթները՝ ներկայացնելով դրանք որպես դերանունների երկու առանձին տեսակ՝

1) *անդրադարձ դերանուններ (reflexive pronouns)*, 2) *սաստկական դերանուններ (emphatic pronouns)* /Кобрина и др., 2007: 143-144; Eastwood, 1997: 187; Gordon, Krylova, 1986: 351-352; Veihman, 2002: 46; Tokmajian, 1995: 41-42/: Մենք կարծում ենք, որ այդպիսի մոտեցումը հակասում է խոսքի-մասային դասակարգման սկզբունքին, ըստ որի հաշվի պետք է առնվեն ոչ միայն գործառական, այլև իմաստային և ձևական չափանիշները: Իմաստաբանորեն այդ դերանունների երկու տեսակները նման են, քանի որ բնութագրում են նույն առարկան: Ձևաբանորեն երկու տեսակներն անգլերենում կազմվում են նույն ձևով՝ ստացական կամ օբյեկտային հոլովով դրված անձնական դերանվանը ավելացնելով *-self/selves* մասնիկները: Գործառական տարբերությունները չեն կարող հիմք հանդիսանալ այդ երկու տարբեր տեսակների դերանունների առանձին ձևեր համարվելու համար: Մենք հակված ենք ընդունելու այն լեզվաբանների կարծիքը, ըստ որոնց երկու տեսակներն էլ անդրադարձ դերանուններ են, որոնցից մեկը շեշտում է դեմքի գաղափարը: Այդ մասին կարելի է տեղեկանալ Մխիթարյանի և Բազիկյանի հոդվածից, բայց վերլուծությունը այնտեղ կատարվել է միայն անգլերենի հիման վրա /Mkhitaryan, Bazikyan, 2016: 428-432/: Այսպիսով՝ այսպես կոչված, շեշտող դերանունները առանձին խումբ են կազմում անդրադարձ դերանունների մեջ, որոնց գործառույթը սահմանափակվում է հատուկ «*շեշտող*» (*emphatic*) իմաստ հաղորդելու ասույթի այն ամդամին, որի հետ այն հարաբերակցվում է:

Անգլերենի անդրադարձ դերանունների առաջին տեսակին հայերենում համարժեք է կամ *-վ* ածանցով բայը, կամ առանց *-վ* ածանցի բայը և անձնական դերանվան հոլովական ձևերը (*ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ*): Անգլերենի շեշտող դերանունները արտահայտվում են *ինքս, ինքդ, ինքն, ինքներս, ինքներդ, ինքներն կամ իրենք* անձնական դերանունների սաստկական ենթատեսակի միջոցով՝ «կատարելով հատուկ ոճական դեր և առանձնահատուկ շեշտելով դիմային գաղափարը» /Ասատրյան, 1983: 182/: Հայ քերականագետները դրանք համարում են բաղադրյալ ենթակա, որի բաղադրիչներից ոչ մեկը մյուսի լրացումը չէ: Առաջին և երկրորդ դեմքերում իբրև ենթակա գործածվելիս՝ դրանք ստանում են *ս, դ* դիմորոշ հոդերը, ինչպես՝ *ինքս-ինքներս, ինքդ-ինքներդ* /Աբրահամյան, 1975: 134, 143/: Ինչպես տեսնում ենք, և՛ անգլերենում, և՛ հայերենում սաստկական իմաստ ունեցող դերանունները չեն կազմում առանձին տեսակ, այլ հանդիսանում են որպես ենթախումբ անգլերենի անդրադարձ դերանուններում կամ հայերենի անձնական դերանուններում:

Մեր ուսումնասիրության առարկան անգլերենի շեշտող դերանուններով կառուցվածքները և դրանց հայերեն համարժեքներն են: Անգլերենի շեշտող անդրադարձ կառույցները բազմաթիվ են և բազմաբնույթ: Համեմատությանն ենթարկելով դրանք հայերենի անդրադարձ կառույց-

ների հետ՝ մենք առանձնացնում ենք հետևյալ կառուցվածքային և իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները:

1. Կառուցվածքային վերլուծություն

Շեշտող դերանունները կատարում են կարևոր հաղորդակցական դեր. դրվելով դերանունից (գոյականից) հետո կամ նախադասության վերջում՝ շեշտում են դրանց իմաստը: Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում, հիշյալ դերանուններին հատուկ են թվի և դեմքի քերականական կարգերը: Կառուցվածքային տեսանկյունից շեշտող դերանունները ցուցաբերում են նմանություններ և տարբերություններ: Ուսումնասիրենք դրանք առանձին-առանձին:

1. Երկու լեզուներում էլ սաստկական դերանունները, հարաբերակցվելով անձնական դերանունների հետ, հանդես են գալիս որպես մեկ միավոր (PR = personal + reflexive) և սովորաբար միասին են գործածվում. անգլերեն՝ *I-myself, you-yourself/yourselves, she-herself, he-himself, we-ourselves, they-themselves*, հայերեն՝ *ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք ինքները*: Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում անձնական դերանվան փոխարեն կարող է գործածվել գոյականը (հատուկ և հասարակ), օր.՝

ա) *I myself* felt as badly as he did and could not understand why I had not gone. (Hemingway, 9)

ես ինքս էլ նույնքան վատ էի զգում դրա համար: Եվ, իսկապես, այնպես էլ չհասկացա, թե ինչու չգնացի: (Հեմինգուեյ, 12)

բ) Half an hour later *Daisy herself* telephoned and seemed relieved to find that I was coming. (Fitzgerald, 99)

Կես ժամ անց **Դեյզին ինքը** զանգահարեց և ուրախացավ, որ գալիս եմ: (Ֆիցջերալդ, 93)

Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում, PR միավորի հարաբերակցվող բաղկացուցիչները նախադասությունում կարող են անջատվել իրարից՝ ընդմիջարկվելով այլ անդամներով, սակայն հայերենում այդ երևույթը այնքան էլ տարածված չէ, օր.՝

ա) *I'm on the school board myself*, you know. (Steinbeck, 73)

բ) ...at three o'clock, just as I was feeling safe, along comes a chap with a message from Mrs. Ryan that *I* was to go to confession *myself* on Saturday... (O'Connor, 16)

գ) **Նա** իր տան համար պաշարեղենն **ինքն** է տուն բերում իր ձեռքով առավոտները կանուխ: (ԱՐԵՎԱԿ)

Ինչպես տեսնում ենք օրինակներից, անգլերենում *they-themselves* և *you-yourself* միավորների բաղկացուցիչները /P և R/ նախադասություններում ցրաղեցնում են տարբեր դիրքեր: Հայերենում *ինքը (ինքս, ինքդ, ինքն, ինքներս, ինքներդ, ինքներն կամ իրենք)* դերանունը գործածվում է անձ ցույց տվող գոյականների հետ և նախադասությունում հանդես է

գալիս տարբեր շարադասությամբ, ինչը բոլորովին չի փոխում նախադասության իմաստը /Աբրահամյան, 1975: 143/, օր.՝

ա) **Հայրս ինքը** մոտեցավ:

բ) **Ինքը որդին** ճանաչեց:

Անգլերենում լեզվաբանների մեծամասնությունը այն կարծիքի են, որ շեշտող դերանվան տեղաշարժը չի հանգեցնում իմաստային փոփոխության /Quirk and Greenbaum, 1987: 8; Leech and Svartvik, 1983: 166-167/: Սակայն, Գ.Վեյխմանը տեսնում է որոշակի իմաստային տարբերություն հետևյալ նախադասությունների միջև /Veihman, 2003: 41/:

ա) *The owner himself* built the house.

բ) *The owner* built the house *himself*.

Ըստ Գ.Վեյխմանի՝ (ա) օրինակում շեշտադրվում է այն միտքը, որ տունը կառուցվել է տիրոջ կողմից, (բ) օրինակում ընդգծվում է այն գաղափարը, որ տանտերը կառուցել է տունը մենակ, առանց որևէ մեկի օգնության: Դժվար է ասել՝ որքանով է նման մեկնաբանումը ընդունելի, քանի որ իմաստները այնքան մոտ են իրար, որ դառնում են գրեթե աննշմարելի:

2. Ի տարբերություն անգլերենի՝ հայերենում ենթական կարող է արտահայտված լինել միայն անձնական դերանվան սաստկական ենթատեսակով, ինչպես *ինքս*, *ինքներս*, *ինքդ*, *ինքներդ*, ինչը բոլորովին չի փոխում նախադասության իմաստը, օր.՝

ա) Then *you* must go into management *yourself* and make me your leading lady. (Maugham, 32)

Այդ դեպքում **ինքդ** անտրեպրենյոր դարձիր և ինձ դարձրու քո թատրոնի աստղը: (Մոեմ, 32)

բ) They did not have a maid or anything, and *they* always opened the door *themselves*. (Salinger, 31)

Նրանք սպասավոր չունեն, ընդհանրապես ոչ ոք չունեն, միշտ **իրենք** են բացում դուռը: (Սելինջեր, 13)

գ) On the other hand if he was shattered and *tongue-tied*, *she*'d be all tremulous *herself*, sobs in her voice and all that ... (Maugham, 69)

Մյուս կողմից, եթե նա հուզված ու կաշկանդված լիներ, **ինքը** ևս կհուզվեր. արտասովոր ծայր ու նման բաներ... (Մոեմ, 80-81)

Անգլերենում, ինչպես տեսնում ենք, անդրադարձ դերանվան այդպիսի կիրառությունն անհնարին է:

3. Հայերենում հնարավոր է *PR բաղադրիչների դիրքի փոխանակում RP*, հատկապես երբ P-ն արտահայտված է գոյականով: Անգլերենում չի դիտարկվում այդպիսի երևույթ, օր.՝

ա) Sometimes in his leisurely movements and the secure position of his feet upon the lawn suggested that it was *Mr. Gatsby himself* come to determine what share was his of our local heavens. (Fitzgerald, 21)

բ) Նրա անկաշկանդ շարժումները, ոտքերի հաստատուն դիրքը խոտի վրա ինձ հուշեցին, որ դա **ինքը պարոն Գեթսբին է** դուրս եկել՝ որոշելու իր բաժինը տեղական երկնականարում: (Ֆիցցերալդ, 22)

Այնուամենայնիվ, անգլերենի *'myself'* անդրադարձ դերանունը «կարծիք հայտնելու» իմաստով ստանձնում է *'Personally'* եղանակավորող մակբայի գործառույթը և գործածվում նախադասության սկզբում՝ անձնական դերանունից առաջ (*R+P*) /Brians:2016; Payne 2011:309/: Այս իմաստով երբեմն հանդիպում ենք *me+R+P* կապակցությանը, որն էլ ավելի է շեշտում անձնական տեսակետը տվյալ հարցի շուրջ: Այս իմաստը փոխանցվում է հայերեն «ես *ինքս* (*ա*), *ես անձամբ* (*բ*), *ինչ վերաբերվում է ինձ*» արտահայտություններով, օր.՝

ա) *Myself, I* can't stand dried parmesan cheese.

Ես ինքս տանել չեմ կարող չորացրած պարմեզան պանիրը:

Myself, I came when I was eighteen – too young, a hot shot, a shit on a speed trip looking for boomtown pussy and my share of the oil. (COCA)

բ) *Me, myself* I'm just looking forward to it. (COCA)

Ես անձամբ անհամբեր սպասում եմ դրան:

4. Անգլերենին բնորոշ է հետևյալ կապակցությունը՝ *Abs N+itself* (*վերացական գոյական+itself*) կամ *R+AbsN* (*անդրադարձ դերանուն+վերացական գոյական*): Նախադասությունում ամբողջ կապակցությունը հանդես է գալիս որպես ստորոգելիական վերադիր, այսինքն բաղադրյալ անվանական ստորոգյալի բաղկացուցիչ մաս, օր.՝

ա) She would be *sweetness itself*, she would wheedle it all out of her, and never give her an inkling that she was angry. (Maugham, 124)

Ինքը ոչնչով զգացնել չի տա, որ բարկացած է, **համակ քնքշություն** կլինի հետը ու այդպիսով դուրս կկորզի ամեն ինչ: (Մոեմ, 151)

բ) There was one photograph of the three of them, Michael very manly and incredibly handsome, *herself all tenderness* looking down at Roger with maternal feeling, and Roger a little boy with a curly head, which had been an enormous success. (Maugham, 19)

Լուսանկարներից մեկը, որը մեծ հաջողություն ունեցավ, պատկերում էր երեքին միասին. Մայքլը խիստ առնական ու նախանձելիորեն գեղեցիկ, **ինքը՝ մարմնացած քնքշություն՝** մայրական սիրով լի հայացք Ռոջերին, որը մի փոքրիկ գանգրահեր տղա էր: (Մոեմ, 15)

Ինչպես տեսնում ենք, անգլերենի անդրադարձ դերանուններին հայերենում համարժեք են այլ խոսքի մասերը՝ ածականը, դերբայը (*համակ, մարմնացած*), որոնք դրվում են անմիջապես վերացական գոյականից առաջ: Հայերենում վերափոխվում է ամբողջ կառուցվածքը՝ *Abs N+itself* կաղապարը փոխակերպվելով *Adj+AbsN* և *R+AbsN* կաղապարը՝ *Part II+AbsN* կաղապարի: Հարկ է նշել, որ անգլերենում, երբ վերացական դերանունների հետ *itself-ի* փոխարեն գործածվում է ուրիշ անդրադարձ դերանուն, վերջինս գալիս է առաջ՝ *R+ AbsN* (օրինակ բ):

5. Անգլերենում PR բաղադրիչները կարող են անջատվել միմյանցից և ստեղծել *ենթակա+ստորոգյալ հարաբերություն*: Հայերենում այդ կաղապարը արտացոլում չի գտնում և հաղորդվում է բայի դիմավոր ձևերով, օր.

ա) With the first night before me *I'm not* really *myself* today. (Maugham, 196)

Այսօրվա արեմիերան է պատճառը, ասես **ինքս ինձ կորցրել եմ**: (Մոեմ, 245)

բ) On the other hand if he was shattered and tongue-tied, *she'd be all tremulous herself*, sobs in her voice and all that ... (Maugham, 69)

Մյուս կողմից, եթե նա հուզված ու կաշկանդված լիներ, **ինքը ևս կհուզվեր**. արտասովալից ծայն ու նման բաներ... (Մոեմ, 80-81)

6. Անգլերենում անձի բացառիկ դերը առավելագույնս ընդգծելու համար գործում է նաև հետևյալ կաղապարը. օբյեկտային հոլովով դրված անձնական դերանուն (*me, him, her, it*) + անդրադարձ դերանուն (*Pobj.+R*): Այս կապակցությունը նախադասության մեջ գործածվում է որպես անուղղակի խնդիր և հաճախակի հանդիպում է *'me'* (*me+R*) դերանվան հետ: Օրինակ՝

ա) It seemed no more dangerous to *me myself* than war in the movies. (Hemingway, 27)

Դա **ինձ համար** նույնքան վտանգավոր էր, որքան պատերազմը կինոնկարներում: (Հեմինգուեյ, 34)

բ) Would you mind asking *him himself*? (Lawrence, 136)

Դուք դեմ չե՞ք լինի դա **անձամբ իրենից** հարցնել:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն (բ) օրինակի, (ա) օրինակում հայերեն թարգմանության մեջ անդրադարձ դերանուն *myself-ը* չի արտացոլվում: Կարծում ենք՝ դրա իմաստը կարելի էր փոխանցել *անձամբ* բառով. *դա ինձ համար -> անձամբ ինձ համար*:

Այսպիսով՝ վերոնշյալ օրինակներից պարզ է, թե ում են հասցեագրվում *'myself, himself'* դերանունները՝ *'me->myself', 'him->himself'*: Այնուամենայնիվ, անգլերենում հնարավոր են նաև այնպիսի դեպքեր, երբ բավականին դժվար է տարանջատել, թե ում է վերաբերում սաստկական դերանունը: Այստեղ մեզ օգնության է գալիս համատեքստը; Օրինակ,

She must find out from *Dolly herself*. (Maugham, 124)

Ոչ, պետք է իմանալ հենց **իրենից՝ Դոլլիից**: (Մոեմ, 151)

Ի տարբերություն հայերենի, որտեղ հայտնի է, որ հեղինակը *իրենից-ը* վերագրում է *Դոլլիին*, անգլերենում անորոշ է՝ *herself* -ը վերաբերում է *'she'* ենթակային, թե՛ *'Dolly'* նախդրավոր խնդրին: Համատեքստից պարզ է դառնում, որ այն վերաբերում է *'Dolly'* նախդրավոր խնդրին, օր.

It would not do to ask Michael, that would look as though she attached importance to it; she must find out from *Dolly herself*. (Maugham, 124)

Ամփոփելով հետազոտության այս մասը՝ կարելի է ասել, որ կառուցվածքային տեսակետից անգլերենի և հայերենի սաստկական կառուցները ցուցաբերում են և՛ ընդհանրություններ (1,4,6), և՛ տարբերություններ (2,3,5):

2. Իմաստային-գործաբանական վերլուծություն

Իմաստային առումով անգլերենի և հայերենի սաստկական դերանունները հիմնականում համընկնում են, թեև կան որոշ տարբերակիչ գծեր: Հարկ է նշել, որ հայերենում այդ միավորները չեն եղել հատուկ իմաստաբանական ուսումնասիրության առարկա, և ինչ նշվում է այս հոդվածում դրանց վերաբերյալ, ներկա հետազոտության արդյունք է: Մենք առանձնացրել ենք հետևյալ իմաստները՝

1. Գործողությունը կատարում է ենթական՝ առանց որևէ մեկի օգնության: Երկու լեզուներում էլ առկա է այս իմաստը, օր.՝

ա) *I* always design the sets *myself* for our plays. (Maugham, 14)

Որպես կանոն, **ինքս** եմ ձևավորում մեր ներկայացումները: (Մոեմ, 7)

Անգլերենում գործածվում է նաև *'by myself'* կամ *'all by myself'* կապակցությունները՝ էլ ավելի շեշտելով ենթակայի գործողությունը, օր.՝

բ) He went off *by himself*, vaguely, in a childish way, seeking for the clue to "luck". (Lawrence, 134)

Նա **մենակ** դուրս եկավ, անվստահ, երեխայի պես՝ փնտրելով հաջողության բանալին:

գ) I saw one kid about her age, though, sitting on a bench *all by herself*, tightening her skate. (Salinger, 129)

Հանկարծ ես մի աղջնակ տեսա նրա տարիքին, նստարանին նստած՝ չմուշկներն էր ամրացնում: (Սելինջեր, 125)

Ինչպես տեսնում ենք, տվյալ օրինակներից *'by myself'* և *'all by myself'* բառակապակցությունները կամ «**մենակ**» մակբայով, կամ ընդհանրապես չեն թարգմանվում հայերեն:

2. Ենթական մասնակցում է գործողությանը կամ դրա ականատեսն է լինում, օր.՝

ա) And *I* wanted to see her *myself*. (Miller, 371)

Ես ինքս ցանկանում էի նրան տեսնել:

բ) I admit...that your wife is not particularly fond of this Miss Fosli.

Is that all? *I* have noticed that *myself*. (Ibsen, 102)

Ես կարծում եմ, որ քո կինը առանձնապես չի սիրում Միս Ֆոսլին:

Այդքան՞ը: **Ես ինքս** դա նկատեցի:

գ) Here he is now, you can ask him *yourself*. (Coward, 286)

Ահա և նա, **դու ինքդ** կարող ես նրան հարցնել:

դ) Only *she herself*, and her *children themselves*, knew it wasn't so. (Lawrence, 132)

Հենց միայն նա և իր երեխաները գիտեին, որ դա այդպես չէր:

ե) Սակայն **կայանավորն ինքը**, դռան բացվելը լսելով, երևաց խցի խորքում և նայեց սպասողական և հետաքրքիր: (ԱՐԵՎԱԿ)

3. Ենթական վկայակոչում է հայտնի, ականավոր և այլ կարևոր մարդկանց բառերը՝ սեփական գործողությունը արդարացնելու նպատակով, օր.՝

ա) *You said yourself*, only just now, that no one but I ought to be allowed to build. (Ibsen, 140)

Դու ինքդ հենց հիմա ասացիր, որ ինձանից բացի ոչ ոքի չի թույլատրվում այն կառուցել:

բ) *The doctor said it himself*. (OALD)

Ինքը բժիշկն ասաց դա:

գ) *Old Solomon himself* couldn't make nothing by 'un. (Lee, 52)

Անգամ ինքը՝ Ծեր Սողոմոնը չէր կարող ոչինչ անել՝ բացի...

դ) - Կարող էր գուցե սխալվել, բայց ոչ ստել կամ զրպարտել, քանզի պիտի խորհեր, որ իր հաղորդածը **ինքը՝ թագավորը** կարող է ստուգել... (ԱՐԵՎԱԿ)

Հայերենում այս իմաստը հաճախակի է հանդիպում և նախադասության մեջ հանդես է գալիս բացահայտչի գործառույթով:

4. Ենթական կատարում մի գործողություն, որը իրեն բնորոշ չէ, անսովոր է, անսպասելի է՝ ելնելով իր հասարակական, բարոյական կամ նյութական նկատառումներից, օր.՝

ա) Sometimes in his leisurely movements and the secure position of his feet upon the lawn suggested that it was *Mr. Gatsby himself* come out to determine what share was his of our local heavens. (Fitzgerald, 21)

Նրա անկաշկանդ շարժումները, ոտքերի հաստատուն դիրքը խոտի վրա ինձ հուշեցին, որ դա **ինքը պարոն Գեթսբին է** դուրս եկել՝ որոշելու իր բաժինը տեղական երկնականարում: (Ֆիցջերալդ, 22)

բ) Part of George's duty was ... to find out what they really thought of Harvard, the seminar and - *even Kissinger himself*. (Segal, 159)

Ջորջի պարտականություններից մեկն էլ իմանալն էր, թե ինչ են մտածում նրանք Հարվարդի մասին, սեմինարի, անգամ **հենց Կիսինգերի** մասին:

Հարկ է նշել, որ հայերենում տվյալ իմաստը արտահայտելու համար «**ինքը**» անձնական դերանունը պետք է նախադաս դիրքում լինի, հակառակ դեպքում՝ այն նոր իմաստ է ստանձնում, որը բացակայում է անգլերենում, օր.՝

գ) *Sir Paul McCartney himself* sang the final song. (<https://learnenglish.britishcouncil.org/en>)

Հենց ինքը՝ սեր Պոլ Մակարտնին երգեց վերջին երգը:

Վերոնջյալ օրինակում անհավանական փաստ է, որ տվյալ անձն ինքն է կատարում գործողությունը, այսինքն՝ այստեղ գործում է «անսպասելիության» գործոնը:

Այստեղ կարելի է ընդգրկել նաև որևէ անհավանական վայրում տեղի ունեցող գործողություն: Այս իմաստը հիմնականում արտահայտվում է *‘itself’* դերանվամբ, ինչպես՝

Crossing the field, I did not know but that someone would fire on us from the trees near the farmhouse or from *the farmhouse itself*. (Hemingway, 154)

Անցնում էի դաշտի միջով և անընդհատ սպասում, որ ահա ուր վոր է կսկսեն կրակել ագարակատան ծառերի ետևից կամ **հենց ագարակափնից**: (Հեմինգուեյ, 34)

Ինչպես տեսնում ենք, հայերենում տվյալ իմաստը ներկայացված է «*ինքը*» անձնական դերանվամբ, «*ինքնին*» մակբայով, «*հենց*» վերաբերականով:

5. Անգլերենում ենթական և ստորոգյալը անջատվելով միմյանցից՝ ստանձնում են նոր իմաստ՝ «*մնալ հավատարիմ իրեն, չկորցնել ինքնությունը, չնմանվել մյուսներին*»: Այս դեպքում յուրաքանչյուրը կատարում է առանձին գործառույթ նախադասությունում՝ ենթակա և ստորոգելիական վերադիր (հաճախ ժխտական ձևով), օր.՝

ա) Unusual for one so young, *she* had the courage to always be *herself*. (<https://gma.com/Georgia>)

Անսովոր էր, որ այդքան երիտասարդ էր, բայց համարձակություն ուներ միշտ **հավատարիմ մնալ իր սկզբունքներին**:

բ) *She* didn’t seem quite *herself*. (OALD)

Նա, կարծես, **դուրս էր գալիս իր հունից**:

գ) None of these people are Meghan Markle. *She is herself*. (<https://www.yahoo.com/celebrity/Meghan-markle-family>)

Այս մարդկանցից ոչ ոք Մեգան Մարկլը չէ: Նա **փարբերվում է մյուսներից**:

դ) *John* needed space *to be himself*. (OALD)

Ջոնին մի վայր էր պետք **մյուսներից մեկուսանալու համար**:

Հայերենին այս կաղապարը բնորոշ չէ, և այդ է պատճառը, որ այն քարգմանվում է բառային և շարահյուսական տարբեր միջոցներով:

6. Անգլերենին հատկանշական է նաև հետևյալ իմաստը. «*որևէ հատկության, որակի արտացոլում, ընդհանրական բնութագիր*», որն արտահայտված է հետևյալ անդրադարձ կառույցով՝ վերացական իմաստով հասարակ գոյականով և *‘itself’* շեշտող դերանունով (*abstract noun+itself*): Այս կապակցությունը նախադասության մեջ հանդես է գալիս որպես ստորոգելիական վերադիր: Երբեմն *‘itself’* դերանվան փոխարեն կարող է գործածվել *‘herself’* և *‘himself’* դերանունները, օր.՝

ա) Later she remembered all the hours of the afternoon as happy – one of those uneventful times that seem at the moment only a link between past and future pleasure but turn out to have been *the pleasure itself*. (Fitzgerald, 87)

Հետագայում նա այդ օրվա բոլոր ժամերը վերհիշում էր իբրև երանելի մի ժամանակ, մեկը այն նվազ ուշագրավ ժամերից կամ

օրերից, որոնք տվյալ պահին թվում են սոսկ որպես անցում՝ երեկվա հաճույքից դեպի վաղվա հաճույքը. մինչդեռ պարզվում է, որ այն **հենց ինքնին հաճույք է եղել:** (Ֆիցջերալդ, 22)

բ) The manager of the hotel is *courtesy itself*. (OALD)

Հյուրանոցի կառավարիչը **քաղաքավարության մարմնացումն է:**

գ) There was one photograph of the three of them, Michael very manly and incredibly handsome, **herself all tenderness** looking down at Roger with maternal feeling, and Roger a little bay with a curly head, which had been an enormous success. (Maugham, 19)

Լուսանկարներից մեկը, որը մեծ հաջողություն ունեցավ, պատկերում էր երեքին միասին. Մայքըլը խիստ առնական ու նախանձելիորեն գեղեցիկ, **ինքը՝ մարմնացած քնքշություն՝** մայրական սիրով լի հայացք Ռոջերին, որը մի փոքրիկ գանգրահեր տղա էր: (Մոեմ, 15)

Տվյալ անդրադարձ կառույցները թարգմանվում են հայերեն «*հենց*», «*ինքը*, *ինքնին*» կամ ուրիշ լեզվական միջոցներով և հատուկ են միայն գրական լեզվին և բանաստեղծություններին:

7. Թե՛ անգլերենին, թե՛ հայերենին բնորոշ է «մեղադրանք» կամ «հակակրանք» արտահայտող իմաստները: Երկու լեզուներում էլ դրանք արտահայտված են երկրորդ և երրորդ դեմքերով (հաճախ ժխտական ձևով), ինչը հաղորդում է խոսույթին «*հակակրանք*»-ի երանգավորում, ինչպես՝ *you yourself, he himself, she herself, they themselves; ինքդ, ինքը, իրենք, օր.*՝

“*You* haven’t acted ethically *yourself* today”, observed the captain. (Bradbury, 111)

- Ձեր վարմունքն էլ էսօր բարոյական չէր, - նկատեց նավապետը: (Բրեդբըրի, 111)

She herself doesn’t always know how she reaches her conclusions. (COCA)

...others argued that *she herself* was to blame for the bloodshed in Texas. (COCA)

Նույնիսկ **դու ինքդ** մեզ չխնայեցիր: (ԱՐԵՎԱԿ)

«**ինքը** լավ գիտի, թե ինչի մասին եմ խոսում և, եթե փորձի շարունակել՝ ես արդեն կվկայակոչեմ մարդկանց, որոնց հետ աշխատել է **ինքը**»: (ԱՐԵՎԱԿ)

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն անգլերենի, հայերենում «*ինքը*» անձնական դերանունը էլ ավելի է շեշտում անձի նկատմամբ բացասական վերաբերմունքը:

Այսպիսով, ուսումնասիրության ենթարկելով անգլերենի շեշտող անդրադարձ կառույցները և դրանց հայերեն համարժեքները, մենք հանգում ենք այն եզրակացության, որ երկու լեզուներում սաստկական իմաստն արտահայտող դերանունը առանձին տեսակ չէ, այլ բաղադրյալի երկրորդ բաղկացուցիչ մասը՝ այն տարբերությամբ, որ անգլերենում վերջինս հարաբերակցվում է անդրադարձ դերանվան հետ (*I myself, you yourself, he himself* և այլն), մինչդեռ հայերենում՝ անձնականի հետ (**ես**

ինքս, դու ինքդ, նա ինքը և այլն): Ձուգադրական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկու լեզուները կառուցվածքային և իմաստային-գործաբանական տեսանկյունից ցուցաբերում են ընդհանրություններ և տարբերություններ, ընդ որում կառուցվածքային տարբերությունները ավելի շատ են՝ ելնելով հայերենի շարահյուսական և ձևաբանական հատկություններից: Իմաստային-գործաբանական տեսակետից անգլերենի շեշտող կառուցները ավելի բազմաբնույթ են և բազմիմաստ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա. Հայոց լեզու, 2 մաս, շարահյուսություն, Երևան, «Լույս» հրատ., 1975:
2. Ասատրյան Մ. Ե. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1977:
3. Вейхман Г.А. Новое в грамматике современного английского языка. М.: Издательство АСТ, 2002.
4. Кобринна Н. А., Болдырев Н. Н., Худяков А. А. Теоретическая грамматика современного английского языка, учебное пособие. М.: Высшая школа, 2007.
5. Лайонз Дж. Введение в теоретическую лингвистику. М.: Прогресс, 1978.
6. Blokh M. A Course in Theoretical English Grammar. М.: Visshaya shkola, 1983.
7. Brians P. 2016 // URL: <https://brians.wsu.edu>>2016/05/19
8. Eastwood J. Oxford Guide to English Grammar. Oxford: Oxford University Press, 1997.
9. Gordon E., Krylova I. A Grammar of Present-day English. Moscow: Higher School Publishing House, 1986.
10. Piyish B.A. The structure of Modern English. Leningrad: Prosveshchenie, 2012.
11. Jacobs R. English Syntax. A Grammar for English Language Professionals. Oxford: Oxford University Press, 1995.
12. Leech J., Svartvik J.A. Communicative Grammar of English. Moscow: Prosveshcheniye, 1983.
13. Mkhitaryan Y., Bazikyan L. On Structure and Semantics of Reflexive Constructions in English // *Linguistics and Literature Studies, Horizon Research Publishing Corporation*, vol. 4 (Nov. 2016), No 6.
14. OALD = Oxford Advanced Learner's Dictionary of Current English, A.S. Hornby, Oxford: Oxford University Press, 2005.
15. Payne Th. Understanding English Grammar. Cambridge: CUP, 2011.
16. Quirk R., Greenbaum S. A University Grammar of English. London: Longman, 1978.
17. Tokmajian H. A Modern English Grammar. Yerevan: Pyunik, 1995.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Բրեդբորի Ռ. Մարսիան քրոնիկոն, Երևան, «Անտարես», 2015:
2. Հեմինգուեյ Է. Հրաժեշտ զենքին, Երևան, «Հայաստան» հրատ., 1972:
3. Մոեմ Ա.Ա. Թատրոն / Անգլ. թարգ. Ջ. Հովհաննիսյանը, Երևան, «Սովետ. գրող», 1985:
4. Սելինջեր Ջ. Դ. Տարեկանի արտում՝ անդունդի եզրին, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1978:
5. Ֆիցջերալդ Ֆ. Ս. Մեծն Գեթսբին, Երևան, «Սովետ. գրող», 1981:
6. Мoэм Уильям С. Театр, 2-ое изд., М.: Высшая школа., 1985.
7. Angelou Maya, Mom & Me & Mom. New York: Random House, 2013.
8. Bradbury R. The Martian chronicals. Санкт-Петербург: Издательство «Каро», 2015.
9. Brown D. Angels and Demons. London: A Random House Group Company, 2009.
10. Carswell D. Count Albany // 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
11. Coward N. Hands Across the Sea // 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
12. Fitzgerald F. Scott. The Great Gatsby. Oxford: Heinemann New Windmills, 1987.
13. Fitzgerald F.Scott. Tender Is the Night. Moscow: Raduga Publishers, 1983.
14. Heller J. Something Happened. New York: Dell Publishing Group, Inc.1974.
15. Hemingway E. A Farewell to Arms. Ленинград: «Просвещение»,1971.
16. Ibsen H. The Master Builder. Six Great Modern Plays. New York: Dell Publishing Group, Inc.1967.
17. Kinsella S. The Undomestic Goddess. London: Transworld Publishers, 2006.
18. Lee Ch. Mr. Sampson. 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
19. Mankowitz W. The Bespoke Overcoat. 24 One-Act Plays selected by J. Hampden. London: J. M. Dent & Sons LTD, 1964.
20. Miller A. All My Sons. Six Great Modern Plays. New York: Dell Publishing Group, Inc.1967.
21. O'Connor F. First Confession // Short Stories for Advanced Learners of English compiled by Badalyan L., Martirosyan S., Hovhannisyan S., Sandukhchyan R., Khachatryan L. Երևան, Լինգվա, ԵՊԼՀ, 2008:
22. Steinbeck J. Molly Morgan // Short Stories for Advanced Learners of English compiled by Badalyan L., Martirosyan S., Hovhannisyan S., Sandukhchyan R., Khachatryan L. Երևան, Լինգվա, ԵՊԼՀ, 2008:
23. Lawrence D. H. The Rocking Horse Winner // Short Stories for Advanced Learners of English, compiled by Badalyan L., Martirosyan S., Hovhannisyan S., Sandukhchyan R., Khachatryan L. Երևան, Լինգվա, ԵՊԼՀ, 2008:

24. Salinger J. D. *The Catcher in the Rye*. Moscow: Progress Publishers, 1968.
 25. Segal E. *The Class*. New York: Bantam Books, 1985.
 26. URL: <https://www.yahoo.com/celebrity/Meghan-markle-family/>

Լ. ԲԱԶԻԿՅԱՆ – *Структурные и семантико-прагматические аспекты эмфатических возвратных конструкций в английском языке (в сопоставлении с армянским)*. – Статья посвящена анализу структурных и семантико-прагматических аспектов эмфатических возвратных конструкций в английском и армянском языках. Проведен подробный структурный анализ конструкций с эмфатическими местоимениями в английском и армянском языках с выявлением сходств и различий, обусловленных спецификой морфологического и синтаксического строя исследуемых языков. В работе уделено большое внимание семантико-прагматическому анализу данных эмфатических конструкций как в английском, так и в армянском языке. Выделен ряд различий в употреблении данных конструкций в английском языке.

Ключевые слова: возвратные местоимения, эмфатическое местоимение, усилители, прагматическое значение, структурный анализ, эффект неожиданности, ЛВ (личные и возвратные местоимения) составляющие, семантический анализ

L. BAZIKYAN – *The Structural and Semantic-Pragmatic Aspects of Emphatic Constructions in English (with special reference to Armenian)*. – The present paper refers to the structural and semantic-pragmatic aspects of emphatic constructions in English and Armenian. The paper gives a structural analysis of constructions with emphatic reflexive pronouns in English and their Armenian counterparts with pointing out the similarities and differences preconditioned by the specificity of the morphological and the syntactic structure of the related languages. Much attention is devoted to the analyses of semantic and pragmatic aspects of the constructions under study. The paper focuses on some differences in the use of English emphatic constructions.

Key words: reflexive pronouns, emphatic pronoun, intensifiers, pragmatic meaning, the effect of “unexpectedness”, structural analysis, PR (personal and reflexive pronouns) constituents, semantic analysis